

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ  
ՆՈՒԻՐՈՒՄԾ  
ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 75ԱՄԵԱԿԻՆ ԵՒ  
«ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ՏԱԳՆԱՊԻ ԸՆԴՄԵՋԷՆ»  
Հատորի Հրատարակութեան Առիթներով

Թէքէան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի Մասնաճիւղի Կազմակերպութեամբ, Ուրբաթ, Յունուար 22ի երեկոյեան ժամը 8:00ին Կլէնտլլի Հանրային Գրադարանին մէջ տեղի ունեցաւ Մեծարանքի Հանդիսութիւն՝ նուիրուած Արամ Սեփեթճեանի Ծննդեան 75 Ամեակին եւ «*Բանաստեղծութիւնը Տազնապի Ընդմէջէն*» հատորի հրատարակութեան առիթներով:

Սոյն հանդիսութեան ներկայ գտնուեցան Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Ծ. Կրդ. Եարտըմեան, Հալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը եւ Հարաւային Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդը՝ Արժ. Տ. Մանուկ Աւագ Քինյ. Մարգարեան եւ Դոկտ. Արժ. Տ. Զաւէն Աւագ Քինյ. Արզումանեան:

Օրուան հանդիսավարն էր մեծարեալին որդին՝ Հրաչ Սեփեթճեան: Ելոյթ ունեցաւ Մարի Քրիսեան՝ «Սեփեթճեան Ածակագիրը»: Մինաս Գոճայեան՝ «Սեփեթճեան գրադատը»: Գործադրուեցաւ նաեւ գեղարուեստական յայտագիր, որու աւարտին Առաջնորդ Սրբազան Հայրը եւ հոգեւորականները «*Ուրախ Լեր*» շարականի երգեցողութեամբ բեմ առաջնորդուեցան: Առաջնորդ Սրբազան Հօր, ՀԲԸՄ եւ Թէքէան Մշակութային Միութեան խնդրանքին ընդառաջելով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պրն. Արամ Սեփեթճեանը պարգեւատրեց Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ Շքանշանով:

Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը, շնորհաւորեց մեծարեալին ծննդեան 75րդ տարեդարձը, բարձրօրէն գնահատեց երկարամեայ գրական հարուստ վաստակը եւ վերոյիշեալ շքանշանով զարդարեց իր կուրծքը:

Մեծարեալը իր երախտագիտութիւնը յայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին եւ սրտագին շնորհակալութիւնները Առաջնորդ Սրբազան Հօր, որ միջնորդած էր Նորին Սրբութեան: Նոյնպէս շնորհակալութիւն յայտնեց Թէքէան Մշակութային Միութեան, որ կազմակերպած էր այս երեկոն: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ ՀԲԸՄ եւ յայտրագրի բոլոր մաս կազմողներուն:

Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: